



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

11 դեկտեմբերի 2017թ. թիվ 87 -Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 01/15.1/8002-17 հանձնարարականի՝ մարզի վիճակագրական մարմիններին աջակցություն ցուցաբերելու նպատակով

կ ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ ԵՄ

1. Ստեղծել ՀՀ Տավուշի մարզի գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում անասունների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով հետևյալ կազմով.

- Վ.Սուրոյան - Հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
- Ա.Աչինյան - ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Տավուշի մարզային գործակալության պետ
- Ա.Ամիրխանյան - Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպ.-յան վարչության բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ
- Ս.Քամալյան - ՀՀ ԳՆ «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների Տավուշի մարզային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
- Զ.Մարդանյան - ՀՀ ԳՆ «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի» Տավուշի մարզային գրասենյակի ղեկավար
- Կ.Մկրտչյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Դիլիջանի տարածքի գլխավոր մասնագետ
- Գ.Վիրաբյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Բերդի տարածքի գլխավոր մասնագետ
- Ա.Խաչատրյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Իջևանի տարածքի գլխավոր մասնագետ
- Ն.Հարությունյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Նոյեմբերյանի տարածքի գլխավոր մասնագետ

2. Հանձնարարել հանձնաժողովին մինչև 2018թ. հունվարի 18-ը մարզում անցկացնել անասունների հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

3. Առաջարկել մարզի ամայնքների ղեկավարներին՝ ստեղծել անասունների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին:

4. Կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Սուրոյանի վրա:



Հ.ԱՐՈՎՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 11
Իջևան